

Տ. ՎՌԱՄՇԱՊՈՒՆ ԱՐՔԵՊՍ. ՔԻՊԱՐԵԱՆ

Յաւով կ'իմանանք այս պատուական եւ վաստակաւոր եկեղեցականին մահը, որ հետեւանքը եղած է յառաջացած տարիքի: Սրբազանը կը վախճանի իբրեւ 80-ամեայ, լցեալ աւուրք: Բանի մը տարիէ իվեր զրեթէ անգործութեան մատնուած էր եւ կը խնամուէր հիւանդանոցի մէջ:

Տ. Վրամշապուհ Արք. ծնած է Շապին-Գարահիսար. ամուսնացեալ քահանայ ձեռնադրուած քայց կանուխէն այրիացած: Փամանակ մը պաշտօնավարած է Կ. Պոլիս Գատը գիւղ, ուրկէ Հովիւ ընտրուած է Բարիգի Թեմին եւ ուր կը պաշտօնավարէր մինչեւ իր մահը: Երջանկայիշատակ է. Դուրեան Պատրիարքէ վարդապետական աստիճան ստացած եւ քանի մը տարի վերջ ալ եպիսկոպոսացած՝ արժանալով նաեւ արքութեան պատուին: Վերջին տարիներուն երբ ալ զրեթէ գործէ քաշուած էր, Բարիգէն կատարուած դիմումին վրայ, իրեն իբրեւ փոխանորդ զրկուած էր Ս. Աթոռոյս Միաբաններէն Տ. Տիրան Վրդ. Ենթոյեան:

Իր պաշտօնավարութեան ընթացքին Սրբազանը ցոյց տուած է անձնուէր ոգի մը, բարձր պահելով հայ եկեղեցականի պատիւը, իր ուղղամիտ եւ պարկեշտ գործունէութեամբ սիրուած ու յարգուած է ան ամենքէն: Սրբազանը կը վախճանի իր ընթացքը լիովին կատարած ըլլալու գոհունակութեամբ, հետը տանելով ամբասիր եկեղեցականի մը համբաւը, եւ աստ ձգելով բարի եկեղեցականի իր օրինակը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Տ. ԽՈՐԷՆ ՔԶՆՅ. ՄԵԼԻՔՇԱՆ

Խոր վիշտով կը լսենք նաեւ Գահիրէի քահանաներէն Տ. Խորէն Քահանայ Մելիքչահ հօր մահը, արդիւնք սրտի կաթուածին:

Տէր Հայրը շուրջ հինգ տարիներէ ի վեր կը պաշտօնավարէր իբրեւ քահանայ եւ իբրեւ ղեւանապետ Գահիրէի Ազգ. Առաջնորդարանին: Իր արժանիքով եւ մտերիմ ու անկեղծ վարմունքով ընդհանուր համակրանք մը ստեղծած էր իր շուրջ:

Կը վախճանի 57 տարեկան հասակին, ծնած ըլլալով 1883 ին ի Գաղատիա, ուսումը առած Արմաշու Դպրեւանքին մէջ. մտած աշխարհական կենցաղ, ունեցած գովելի պաշտօնավարութիւններ Պոլսոյ ազգային շրջանակին մէջ: 1922 ին մեկնած Պոլիսէն եւ ապաստանած Բարիգ, ուրկէ 1935 ին կանչուած է Գահիրէ եւ մտած եկեղեցական ասպարէզ: Եղած է զարգացած հոգեւորական ու եկեղեցիի անձնուէր պաշտօնեայ:

Դժբախտութեանց եւ ընտանեկան վիշտերու բովէ մը անցնելով կը մտնէ Տէր Հայրը իր յաւիտենական հանգիստը:

Խաղաղութիւն իր հոգիին:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Shnorh Kaloustian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.